

ներով. Ալբյու, որ մանուկ հասակի մէջ մե-  
 րած է, Յովհաննէս և Անտոն: Յովհաննէս  
 Փրանսական կոլէժ աւարտելէ վերջ՝ ամուս-  
 նացած է բուլղար օրիորդի մը հետ, որմէ  
 ունեցած է երկու զաւակ. այժմ կը գտնուի  
 Աղեքսանդրիա և Մաթոսեան ծխախոտի  
 գործին մէջ է: Անտոն՝ Պրովգիւի Միւլթա-  
 բեան վարժարանը և Փրանսական կոլէժը  
 աւարտելէ յետոյ՝ Անգլիոյ համալսարաննե-  
 րու մէջ շարունակած է իր բարձրագոյն ու-  
 սումը և աւարտած փայլուն վկայականնե-  
 րով: Իր մասնագիտութիւնն է finance et in-  
 dustrie des peaux en chimiques: Կաշիի ճիւղ-  
 զին մէջ մեծ յաջողութիւն գտած և գիւտեր  
 բրած է: Գործարանատէրեր մինչև 25.000  
 անգլիական ոսկեղ գումար առաջարկած են  
 իր զիւտերուն համար: Անտոն այժմ հրաւի-  
 րուած է Ասիսապէսի, ուր իրեն առաջար-  
 կուած է բարձր պաշտօն մեծ գործատունե-  
 րու մէջ:

1949ին Աղեքսանդրիոյ մէջ Հայ Կաթ-  
 երկսեռ Երիտասարդաց ակումբ մը հիմնուած  
 էր, որուն նախագահ ընտրուած էր Անտոն  
 Տէրաշեան: Անցեալ տարի ակումբի բա-  
 ցումը կատարուած է ներկայութեամբ Վե-  
 նետիկի Միւլթաբեան Միարանութեան Ար-  
 բաժոր Գեր. Սրապիոն Աւուսնոճեանի և բազ-  
 մաթիւ հրաւիրեալներու: Ակումբը նուե-  
 րուած է Դանիէլ Վարուժանի անուն:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ԱՐՏԱՆԱԶԳ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ ՍԻՐՄԵՆԵԱՆ, Պատմու-  
 քիւն Հայկալի Հայոց. տեղագրական, վիճակա-  
 գրական, պատմագրական: Հատոր Ա. Սուրիա.  
 Հայկալ 1940, 80, էջ 1095: Հատոր Բ. Հայկալ,  
 Բէյրութ 1946, էջ 1Ա + 977: Հատոր Գ. (Հա-  
 յիկալի հայ գաղութը): Պարիս 1950, էջ ԺԶ + 996:  
 էջ ԺԶ + 996: Գիճճ՝ երեք հատորներու՝ 30 տո-  
 ւար:

Ընդարձակած աւալ աշխատութիւն մը կը  
 դնէ Սրբազան Հեղինակը գրասէրներու սե-  
 րանին վրայ, երեք լայնափոր հատորներ  
 մեծ-ութեամբ 3000 էջերով: Այն կը կրէ ճա-  
 կատին «Պատմութիւն Հայկալի Հայոց», լոյս  
 տեսած յընթացս վերջին 10 տարիներու:  
 Գործին նպատակն է տալ «1355—1908» տա-  
 րիներու Հայկալի հայ Գաղութին պատմու-  
 թիւնը: Իրեւ նախապատրաստութիւն այս  
 մեծ աշխատանքին լոյս ընծայած էր Հեղի-  
 նակը կանխաւ «Պատմութիւն Հայկալի Ազգ-  
 Գերեզմանատանց և Արձանադիր հայերէն  
 տապանաքարերու» (1935) և Հայկալի հայե-  
 րէն ձեռագիրներու ցուցակը երկու հատոր-  
 ներու մէջ (1935—1936), չեմ յիշեր նոյն նիւ-  
 թին հայոց այն մանր աշխատութիւնները,  
 որոնք երեւցած էին առանձին պրակով և  
 յօդուածներով ազգային պարբերապիւններու  
 մէջ:

Կարևոր տեսած է Սրբազան Հեղինակը  
 իրեւ նախապէս ծանօթացնել նախ «Սու-  
 բիա» աշխարհամասն (Ա. հատոր) և ապա  
 «Հայկալ» շահաստանը (Բ. հատոր). իսկ  
 «Պատմութիւն Հայկալի Հայոց» վերապա-  
 հուած է Գ. հատորին: Պիտի հարցնենք:  
 Այս յատակագիծին վրայ պիտի չտուժէ՞ չէն-  
 քին համաչափութիւնը. Ա. և Բ. հատոր-  
 ները եթէ նախադուր կը կազմեն շէնքին,  
 վախ չկա՞յ, որ շէնքը դուրս փախչի այս  
 դռնէն:

Իմ նպատակս չէ հոս այս երեք հատոր-  
 ները մանր գննութեան առնել: Պիտի ծան-  
 րանամ Գ. հատորի վրայ, համառօտիւ միայն  
 տարով առաջին երկուքի բովանդակութիւնը:  
 Կը կանխեմ ըսել, որ նկատի պիտի չառնեմ  
 այն կարգ մը կէտերը, որոնց բացակայու-  
 թիւնը պիտի բարձրացնէր աշխատութեանս  
 լրջութիւնը: Եթէ Հեղինակը կը գիտակցէր  
 «անաչառ պատմագրի պարտականութեան»  
 (516), ապա թոյլ պիտի չտար իր գրչին  
 պատմական աշխատասիրութեան մը մէջ ջա-  
 տագով և պարսաւագիր հանդիսանալու այն-  
 պիտի հարցերու, որոնք դարերով հետու-

են ներկայէն: Ժամանակները ունեցած են  
 իրենց սեպհական դատումները, զգածում-  
 ներն և արտայայտուելու լեզուն: Ազգամի-  
 ջեան ինդիւրներ, արտասահմանեան ազդե-  
 ցութիւններ կղած են անցեալի մէջ և կան  
 ներկայիս առաւելագոյն չափով, եթէ տես-  
 նել միայն ուզուի: Կը զայրանայ Հեղինակը  
 Հումի նեղմտութեան վրայ, վասն զի Վիկ-  
 լիֆ և Հուս իրենց նորածե վարդապետու-  
 թեանց համար դատապարտուած են. բայց  
 կ'արդարացնէ Ուսիբիոսի սպանութիւնը,  
 վասն զի հայրապետական դահը բարձրանալ  
 մտարեբաժ է:

Անցնինք հատորներու բովանդակու-  
 թեան:

Հատոր Ա. Սուրիա: Նկատի կ'առնուին  
 երկրին Բնական (1—178), Տնտեսական  
 (179—328) և Քաղաքական (329—453) աշ-  
 խարհագրութիւնը. ապա «Անապատի Պէտէ-  
 վիներ» (454—507) և «Սուրիոյի Պատմու-  
 թիւն» (508—1026):

Հատոր Բ. Հայկալ: Երեք մասերով՝  
 «Հայկալ» (1—750). «Արդի Հայկալ» (751—  
 876) և «Քաղաքին պատմութիւնը» (877—  
 967). գննութեան կ'առնուին Քաղաքին բնա-  
 կան նկարագիրը, չին ջրանցքները, հան-  
 քերը, քաղաքին յատակագիծը, չին պա-  
 բիսպները, բերդը, չին պալատները (1—  
 191), մզկիթները, չին և նոր մէտրէսէները  
 և նմանիք (192—260), աղբիւրները, բազ-  
 նիքները, բնակարանները և բնակչութիւնը  
 (261—441). Հրեաները (470—488). Քրիս-  
 տոնեաները անցեալին և ներկայիս (417—  
 469), Եւրոպացիները չինէն ի վեր. օտար  
 հիւպատոսարաններ (540—623). հիւանդու-  
 թիւնք, առողջապահութիւն, բժշկական ա-  
 րուեստ (624—719), գրական և զեղարուես-  
 տական շարժում (720—750). կառավարական  
 վարչաձեւը անցեալին և ներկայիս (489—  
 539). հանրօգուտ սպասարկութիւններ և  
 նմանիք (751—806), ընկերային կեանք, կազ-  
 մակերպութիւններ (807—852), առևտրա-  
 կան սենեակը (853—876), քաղաքին պատ-  
 մութիւնը յընթացս դարերու (877—971):

Նկատի չէ առնուած Երկրաշարժներու  
 տարեգիրքը: Բայց կ'արժէր յիշել 1156/7ի  
 մեծ երկրաշարժը, որուն համար Ժամանա-  
 կակից մը՝ Գրիգոր Երէց արձանագրած է  
 Մատթէոս Ուրհայեցոյ Ժամանակագրու-  
 թեան շարունակութեան մէջ. ՈՅ (1156)

«Ի հոկտեմբերի ամսոյ ի Զ. սկսաւ շարժ լի-  
 նել յամենայն երկիր. և բազում քաղաքք  
 Տաճկաց ի սահմանս Արարիայ որ է Հայաստ, կործանեցան ի հիմանց. և զազա քրիստո-  
 նէից պահեաց Տէր մինչև ցայժմ: Եւ անդա-  
 դար լինէր շարժն մինչև ի փոխել թուակա-  
 նիս. որ ոչ կայր համար կամ թիւ շարժմանն  
 դամիսս չորեքտասան» (էջ 521, սպ. Երու-  
 սաղէմ):

Այս երկու հատորներու մէջ հետեւած է  
 Հեղինակը Փրանսական և անգլիական աղ-  
 բիւրներու: Ինչպէս կ'երևայ ունեցած է իրեն  
 օգնականներ, դոնէ այսպէս և նմաղբել կու  
 տան ինչ ինչ կէտեր: Անոնց անդիտութեան  
 կը վերադրեմ նաև հետեւեալ անուններու  
 տառադարձութիւնները. «Թէոդորէ Սիրի  
 եպիսկոպոս (902), իմացիր Թէոդորեոս(ոս)  
 Կիւրոսի եպիսկոպոս. Օգրոէնք, Ոսրոնա-  
 ցիք, այսինքն Ուրհայաստանի բնակիչները.  
 Խոսրոէս (904) Սոսրով. Թէոդիլիս Թէոդ-  
 աիստոս. Սամուսղ, Ագաբիոս, Ագապիոս,  
 Պէրէհէա (902—903), իմացիր Բերիա ևւն:

Գ. հատոր. Պատմութիւն Հայկալի Հայոց  
 (1335—1908): Հեղինակը հետեւած է հոս  
 Ժամանակագրական կարգի, և զլուրիներու  
 բաժնած է Ս. Քառասուն Մանկանց Եկեղեցոյ  
 առաջնորդներու գահակալութեան տարիներ  
 ի համաձայն: Հայկալի հայ գաղութի, յատ-  
 կապէս Առաջնորդարանի պատմական պար-  
 զացման համար զնահատելի է Ժամանակա-  
 դրական այս կարգը. բայց կը սպասուէր, որ  
 Հեղինակը առանձին բաժիններով նկատի առ-  
 նէր գաղութին մշակութային և տնտեսական  
 կեանքը. քանի որ կը գրէր Հայկալի Հայոց և  
 ոչ Առաջնորդարանի պատմութիւնը:

Հետաքրքրական էր ունենալ 1. Գաղութի  
 կազմակերպումի պատմութիւնը. ի՞նչ տարր-  
 ներէ կը բաղկանար ան:

2. Ինքնապաշտպանութիւնը. Պետու-  
 թիւն և ժողովուրդ, հալածանք և հարստա-  
 հարութիւնք, ուրացութիւնք:

3. Տնտեսական կեանքը: Բնակութիւն.  
 Կիւղեր. Տուրեւառ:

4. Արհեստներ և արհեստանոցներ.  
 Ասեղնագործութիւն. Ոսկերչութիւն:

5. Առողջապահութիւն. Բժիշկներ. Մայ-  
 բանոց ևւն:

6. Միութիւններ. Կուսակցութիւններ:  
 Աղքատախնամ և Բարեգործական հիմնադ-  
 րութիւններ:

7. Դպրոց. Գրչութեան արուեստ. գրականութիւն. գրագէտներ. Լրագրութիւն. Տպարան, Գրագրարան:

8. Նիստ ու կայ. սովորութիւններ. տարազ:

9. Հոգեւոր:

10. Յարանուանութիւններ. «Առաքելական», կաթողիկէ եւ բողոքական եկեղեցիներ, ևն:

11. Երեւելի դէմքեր, մասնագէտներ, պաշտօնեաներ ևն:

Այս 1—11 կէտերուն բաւականութիւն տուած է միայն 972—982 էջերու մէջ (ԳԼ ԾԴ. Հայկաբի Հայոց առանին եւ շուկայի կեանքը, արհեստ, վաճառականութիւն եւ արուեստ: ԳԼ ԾԵ. Հայկաբի Հայոց բարքերն եւ սովորութիւնները):

Կրօնի, թէ Հայկաբի Հայերէն 65-000 «առաքելական», 12-000 կաթողիկէ եւ իբր 1000 բողոքական Համայնքներու կը վերաբերին (Բ. էջ 425): Բայց կաթողիկէ Հայոց ոչ Առաջնորդարանի եւ ոչ առաջնորդներու մասին խօսք եղած է: Բայց առանձին գլխով խօսուած է Հայկաբի Հրեաներու մասին (Բ. 470—488): Հ. Յ. Քոսեան իր Բարձր Հայքի մէջ օրինակ տուած էր, թէ որքան լայնատարածութեամբ պէտք է ընթանալ անաշու պատմագիր մը իր պարտականութեան մէջ: Ստորագրող մենագրութիւն մը նուիրած էր Հայոց Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոսին:

Երբ կը գտնուէի Հայկաբ, ինձ ցոյց տուած էին տուն մը, ուր բնակած է Լեւոն վերջին Լուսինեան, իր գերութեան օրերուն ժամանակաւորապէս: Այս աւանդութիւնը կ'երեւայ թէ չէ հասած Արտաւազ Սրբազանի ականջը, այլապէս յուսալի էր այս նկատմամբ ոչ միայն մանրամասնութիւններ հատորիս Ա. գլխուն մէջ, այլ եւ լուսանկար մը յիշեալ տան:

Հայկաբի Հայոց մասին առաջին գրաւոր վկայութիւնը գտած կը համարի Սրբազանը 1355 տարւոյն գրուած յիշատակարանին մէջ, զոր երուսաղէմի Թ. 2629 Աւետարանին մէջ գտած է (էջ 7—11, 146—147): Բայց աւելի հնագոյն մը, 1329էն պահուած է Հայկաբի Թ. 126 Ժողովածոյ ձեռագրին մէջ, որուն անուշադիր եղած է Սրբազանը պարգայէս թիւրիմացութեամբ մը. ՉճՂ (Երկիցս) կարգալով 700 + 100 + 78, որով ստացած է փրկչական 1429 տարին, առանց արժէք տա-

լու ՉՂ (1329) ընթերցուածին, ինչպէս անգամ մը գրուած է նոյն յիշատակարանին մէջ: Թէեւ Հանդ. Ամս. 1935, էջ 442 հրաւիրած էի Սրբազանին ուշադրութիւնը այս կէտի վրայ, բայց դարձեալ կրկնած է նոյնը ա՛յս տեղ, այն համոզմամբ թէ ՉՂ գաղափար օրինակին կը հայի: Յամենայն դէպս հարկ է կրկնել թէ ՉճՂ կարգալու է «եւթնհարիւրերորդ եւթանասներորդ ութերորդ»: Դժուարին պիտի չըլլայ հաստատել զայս, եթէ նկատողութեան առնենք, թէ յիշատակարանին մէջ Լեւոն Օշինեան թագաւոր եւ Յակոբ կաթողիկոս կը յիշուին, որոնք ճշդիւ 1329ին կենդանի էին: Այս առթիւ գրած էի սուղերս. «Այս ձեռագիրը Հայկաբ գրուած ձեռագիրներէն ամէնէն հինը կը ներկայանայ. եւ եթադրել կու տայ թէ կար հոն, արդէն 1329ին հայ գաղութ մը, որ ունէր յանուն Ս. Աստուածածնի եկեղեցի մը»:

Նկատմամբ Երուսաղէմի Թ. 2629 ձեռագրին կարելի չէ հաստատել, թէ ան 1355ին Հայկաբ գրուած ըլլայ. վասն զի գրչութեան ոչ քաղաքը յիշուած է եւ ոչ ալ եկեղեցին. կրօնի միայն, թէ Աւետարանս 1379ին Հայկաբ գտնուած է Ամիր ոմն զայն ստացած է: Որչափ ալ կը պակսի մեզի գրաւոր յիշատակարան 1329էն յառաջ, բայց այս թուականին Ս. Աստուածածին եկեղեցոյ պոյութիւնը Հայկաբի մէջ ցոյց կու տայ թէ ունէին հոն Հայերը բնակութիւն, հաւանօրէն նաեւ Հոգեւոր սոյն ուխտաւորներու համար որոնք Հայկաբի վրայէն կ'երթեկեկէին Ս. Երկիր:

1400ին կը յիշուի «Թաւաքալ Հայկաբ տանուտէր» (էջ 21): Իսկ 1438ին «Յովակիմ Եպիսկոպոս Բերիոյ», որ Կոստանդին Վահագնի կաթողիկոսի կողմէ պատգամաւոր գնաց Փյոնիսիոյ Ժողովին (Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայոց, Վիեննա 1878, էջ 88—89): Սրբազանին հաճելի չէ եղած, որ Հայկաբ առաջին անգամ յիշուած Եպիսկոպոսն Յովակիմ մասնակցած է Փյոնիսիոյ Ժողովին (էջ 21—24): Ա՛յս արամագրութեան տակ «նաչատուր արքեպ. Բերիոյ առաջնորդ (1438)» նշանակուած է Գ. գլխու խոստարանութեան մէջ (էջ 11), փոխանակ «Յովակիմ»ի: ԺԵ. դարուն աւելի լայնատես էին մեր նախնիք:

Յովակիմ Եպիսկոպոսի յաջորդները չեն յիշուիր մինչեւ 1525: Յաջորդ տարիներուն՝ 1526 եւ 1535 կը յիշուի նաչատուր Եպիսկո-

պոս, որ 1545ին արքեպիսկոպոս կը յորջորջուի (էջ 43): 1578ին Հայկաբ վախճանած է Սարգիս արքեպիսկոպոս, հաւանօրէն տեղւոյն թեմականը (էջ 68—69): Յաջորդաբար կը յիշուին Ղազար արքեպիսկոպոս, 1580, 1588 (էջ 74—76). Յովհաննէս Ուրհայեցի, յիշուած 1603, 1620 (էջ 146). Նաչատուր Կարկառեցի (1603—1620, էջ 237), Սիմէոն Սերաստացի (1629, 1633 ևն, էջ 387). Յակոբ Կարկառեցի (1633—1640. ԳԼ ԺԴ, էջ 390—396), Գրիգոր Չէլթունցի (1642—1651. ԳԼ ԺԵ, էջ 412—424), Նաչատուր Սերաստացի (1651—1657. ԳԼ ԺԶ, էջ 397—412): Իսկ ԳԼ ԺԵ, էջ 396/7 կ'ըսուի թէ Յակոբ Կարկառեցի երկրորդ անգամ առաջնորդ ընտրուած ըլլայ 1657—1660 շրջանի համար:

Նախ ուշադիր կ'ընեմ որ հոս գլխակարգութեան մէջ ետեւադասութիւն մ'եղած է. պէտք է ուղղել այսպէս ԺԴ. ԺԵ. ԺԶ ԺԷ. ինչպէս յառաջ բերի վերագոյն: Յակոբի երկրորդ անգամ առաջնորդութեան համար Հեղինակը վկայ կը բերէ յիշատակարան մը, ուր կ'ըսուի թէ օրինակութիւնը աւարտած է «ի հայրապետութեան Կիլիկիոյ տէր Սիմէոն կաթողիկոսին եւ ի յառաջնորդութեան Բերիա քաղաքի տէր Յակոբ աստուածարան վարդապետին, ի թուականիս ՌճԶ (1657) ամին մայիս ամսոյ ի Լ» (էջ 396): Թէ ուսկի՞ց առնուած է յիշատակարանս չէ ըսուած. ձեռագիրն եղած է Առաքել Սիւնեցոյ Սահմանաց լուծմունքը: Հոս յայտնապէս թուականն սխալ արտագրութիւն մը կայ: Կը յիշուի Սիմէոն կաթողիկոս, որուն աթոռակալութեան առաջին տարին է 1633 (ՌՁԲ). իսկ 1657ին Սիւնի կաթողիկոսն էր նորընտիր Նաչատուր Գաղատացի. ուստի ՌճԶ իմանալու է ՌՁԶ տարին: Ընդ այս թուականին օրինակուած է էջմիածնի Թ. 2500 (Լուծմունք Սահմանաց Առաքել Սիւնեցոյ): Ըստ այսմ Յակոբ արքեպիսկոպոս երկրորդ անգամ առաջնորդ չէ եղած:

Նաչատուրին յաջորդը կ'ըլլայ Յովհաննէս 660ին, (էջ 463—466). և ասոր՝ Դաւիթ Կարկառեցի (1661—1668, էջ 466) սա կը յիշուի ձեռագիրներուն մէջ 1661ին (Երուսաղէմի Թ. 1603 Մաշտոց). և նոյն տարւոյն մայիս 20ին (Ձմեռ, Թ. 169):

Արտաւազ Սրբազան Michel Febreի գրուածքն թարգմանաբար յառաջ կը բերէ հատուած մը, ուր կը պատմուի Ներսէս

Անարծաթ վարդապետի քարոզչական դործունէութեան մասին Հայկաբի մէջ (էջ 571—574): Բայց միտ չէ դրած, որ այս վարդապետը յիշուած է նաեւ հայ յիշատակարանի մը մէջ, զոր ունէր ձեռքի տակ: Սրբազանը էջ 662 Հայկաբի Թ. 28 ձեռագրէն տուած է տեղիքս Ղալաթեար տէր Յովհաննէսի գրչէն. «Թ՛վին ՌճԽԶ (կարգա ՌճԽԶ, 1677) փետրուար ամսոյ ԺԷ. Եկա Անարծաթ Ներսէս վարդապետն Հայկաբ, քարոզեց: Բռնել ավին զինք չար մարդիկը. Երկու հազար զրուշ ճարեմայ: Աստուած անիծէ սապալ եղողն» (Յուցակ, Ա., էջ 387): Այս տողերուն կը կցէ Սրբազանը. «Իր մասին այլուր տեղեկութիւն չունինք. կը թուի որ շրջուն քարոզիչ մըն էր Արեւելեան Հայաստանէն Հայկաբ հասած»:

Հեղինակը ընդարձակ տեղ յատկացուցած է Պետիկ եւ Սանոս եղբայրներու եւ վերջնոյս գերդաստանին (էջ 237—379): Յաջոգած է ծանօթ նիւթերու վրայ աւելցնել նորեր հորանգական աղբիւրէ: Հետաքրքրական են նաեւ Պ. Նիարի հունգար մատենագիրն մենագրութիւնը «Ապետիկ կոմսի գարմանայի կեանքը», որուն հայերէն թարգմանութիւնը տուաւ Հ. Ա. Փոկոյեան Բագմավէպի մէջ 1946ին: Նիարի իրեն աղբիւր ունեցած է Ապետիկի մէջ աշխատութիւնը, որուն մէջ կը ստորագրէ իր անունը Պետրոս Պետիկ: Հունգար հեղինակի համաձայն Ապետիկի հայրը եղած է Մուրատ եւ պապը Պետիկ: Ինքը Պետրոս Պետիկ իր ինքնակենսագրութեան մէջ սակայն չէ յիշած իր հօրը անունը: Պ. Պետիկի ակնարկուած աշխատութիւնն է.

Cehil sutun seu explicatio utriusque celeberrimi, ac pretiosissimi theatri quadraginta columnarum in Perside orientis, cum adjecta fusiori narratione de religione, moribusque Persarum, et eorundem vivendi modo, populis vicinis, aliisque de hac orientali natione famosissima scitu dignis... ձեռնուած Լէոպոլդ Ա. Կայսեր ab authore... Petro Bedik, nobili Pers-Armeno, olim venerabilis Collegii Urbani VIII. de propaganda fide in literaturis artium, et SS. Theol. alumno, exinde vero per plures annos gravissimorum pro christianitate Orientis negotiorum fideli zelatore. Viennae, Austriae 1678. 8° pp. XVI + 480.

էջ 456—473 կու տայ համառօտիւ իր կենսագրութիւնը: Անոր պապը Յակոբ ազա Պե-

տիկ իր որդւոյն հետ Պաղտատի («Բարե-  
լոնի») առջեւ գերի կ'իջնայ Պարսից ձեռքը:  
Իր երէց եղբայրն է Պետիկ Աստուածատուր.  
Շահ Արաս կ'անուանէր զանիկա Ա. Պետիկ  
խոնայ. այս Աստուածատուրն է, զոր Պետրոս  
Վալեցի (P. a Valle) իր ուղղագրութեան մէջ  
խոնայ Շատուր եւ խոնայ Արեղիկ կը կոչէ,  
ճագումով Զուգայցիցի:

Պետիկ թուրքերու քով ազատ կ'արձա-  
կուի եւ Հալէպի մէջ կը հաստատուի: Կին  
կ'առնէ Քիլիսցի Շամաձենց ընտանիքէն.  
Քիլիս բարեբեր քաղաք էր. այս պատճառաւ  
կ'ըսուէր. «Քիլիս բարի լիս», այսինքն «բարի  
լոյս է»: Իր պաշտպանին մահէն ետքը թուր-  
քերը կը ստիպեն զինքը որ կրօնը ուրանայ.  
Եւ այս պատճառաւ կը գլխատուի: Պետիկի  
որդին (անունը չի յիշուիր, իմացիր Մու-  
րատ) կը փախչի Պարսկաստան, Շահ Աւ-  
ֆիէ քով: Սա կ'ունենայ 12 զաւակ, վերջինն  
էր Մանուկ, որ կոչուեցաւ Պետրոս Պետիկ.  
հայրն եւ եղբարք կը վախճանին. կը մնայ  
Մանուկը միայն. որ եւ օսմանեան դուռը կը  
կանչուի: Մայրը տղան ազատելու համար կը  
խորհի Պարսկաստան ուղարկել. յոյն կաթո-  
ղիկէ քահանայ մը խորհուրդ կու տայ Հա-  
լէպի հիւպատոսներէն միոյն միջնորդու-  
թեամբ Եւրոպա ուղարկել. Փրանկիսկոս Պի-  
կետ (F. Piquet) Փրանսական հիւպատոսը  
կ'ուզէ Յրանսա իր տունը առնել. բայց Բո-  
կոսն Կարմեղեան Միարանութենէն եպիսկո-  
պոս մը կը յանձնարարէ Հոռոմ Ուրբանեան  
Դպրոցը զրկել: Կը հաւանի Մայրը:

Մանուկ կը հասնի Հոռոմ եւ կ'ընդունուի  
Ուրբանեան դպրոցը. անունը փոխելով կը  
կոչուի Պետրոս: Այն տեղ կ'աշակերտի շատ  
տարիներ, կ'ունենայ ընտիր ուսուցիչներ, կը  
հմտանայ լատին եւ իտալական լեզուներուն,  
կը կատարէ փիլիսոփայական եւ աստուածա-  
բանական ընթացքները մեծ յաջողութեամբ:  
Բայց յանձն չ'առնէր քահանայ ձեռնադրուիլ  
(էջ 456—470): Անկէ կու գայ Վիեննա եւ կը  
մտնէ Լէոպոլդ կայսեր ծառայութեան:

Հոռոմ գտնուած ժամանակ կը շարադրէ  
Պետրոս Պետիկ հետեւեալ աշխատութիւնը:

«Պետրոս Պետիկեցի Քիլիսեցւոյ, աշա-  
կերտի Փրոփականգային Հոռովմայ, Համա-  
նօս գիրք Բնարանական գիտութեանց ի իՖ  
յօդուածս հանդերձ ուղերձիւ միով առ կար-  
գինայ իշխանան»: Երուսաղէմ, Թ. 969 (Մա-  
ւարանեան, Յուլիան):

Ասկէ օրինակ մ'ալ կայ Սաչիկ Վ. Գա-  
ղեանի Զեռագիրներու մէջ, Թ. 102, թղ.  
71ա: Յ. Թօփճեան (Յուլիան, Ա., 111) յա-  
ռաջ կը բերէ. «Վեհագունից եւ պատուակա-  
նագունից տերանց Կարտինոսերանց... Պետ-  
րոս կոչեցեալ Պիտիքեցի հայ Քիլիսցի,  
անեալ ի Համարարանին Ուրբանոսի Յա-  
ղապս ածման Հաւատոյն»:

Հոս Հալէպի մէջ վախճանած է Սիսի  
Պետրոս Կարկառեցի կաթողիկոսը 1608ին  
(էջ 116—128): Նոյն տարւոյն վախճանած էր  
նաեւ Սրապիոն Ուրհայցի կաթողիկոս:  
Անոնց մահուան առթիւ Ներքողեան մը գրած  
է Կարապետ Քօթ Վ. Թիւրաւանցի, որ կը  
հրատարակուի առաջին անգամ այս տեղ  
(էջ 129—145) Երուսաղէմի Թ. 1942 ձեռա-  
գրէն:

Հալէպի անուանի դէմքերէն եղած է  
Մուրատ Սարգիս քահանայ (1592—1662):  
Սա 1635ին Իզմիր օրինակած է Բժշկարան  
մը, որ այժմ պահուած է Էջմիածին, Թ. 413,  
ոչ ըստ Կարինեան Յուլիանի, ինչպէս նշանա-  
կած է Սրբազանը (էջ 426), այլ ըստ նոր  
թուարկութեան: Սարգիսի հեղինակութիւնն  
է «Վասն անուանց եւ որպիսութեանց պա-  
տուական ականց» գրութիւնը, զոր Առաքել  
Դաւրիթեցի աւանդած էր մեզի, կը հրատա-  
րակուի հոս միւսանգամ (էջ 432—446):  
Մուրատ Սարգիսի ուրիշ մէկ աշխատութիւնն  
է Ծառգիրքը, ուսկէ քաղուածքներ կը ներ-  
կայացուին (էջ 449—454):

Ամբողջութեամբ տուած ըլլալու համար  
հատորիս բովանդակութիւնը, յիշեմ նաեւ  
Երկու գլուխ, որոնք նուիրուած են Ս. Քա-  
նաւուսի եւ Ս. Աստուածածին Եկեղեցիներու  
գարդերու, սպասներու, անօթներու (էջ  
899—911) եւ նկարներու (էջ 911—972) ցու-  
ցակազրութեան:

Այս պատմական յիշատակարաններով  
հարուստ հատորս կը կարօտէր անուանա-  
ցանկի մը. ափո՛ս որ կը պակսի ան:

Ահա բովանդակութիւնը երեք հոյակապ  
հատորներու, որոնք իրենց ընդարձակու-  
թեամբ յետ պատերազմեան շրջանի միակ  
հրատարակութիւնն կը ներկայանան հայ  
գրական հրատարակին վրայ: Որպիսի՛ կամք,  
կորով եւ աշխատասիրութիւն կ'ենթադրեն  
անոնք Սրբազան Հեղինակին մէջ: Մենք կը  
յայտնենք մեր հիացումը:

Հ. Ն. ԱԿՆԵԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Խ Ն Ն Ե Ր

(Ուղարկուած Խմբագրութեանս):

Ազատանի Սրապիոն, Տաղեր ու Շաղեր (բա-  
նաստեղծութիւններ): Շթութկարտ 1949:  
Աքանասեան Խաչիկ Վ., Հեթանոսի որդի:  
Թատերախաղ չորս արարուած. թրգմ.  
Փրանսերէնէ: Պէյրութ, Հայ կաթ. տպա-  
րան, 1950, 80, էջ 86: Գինն՝ 100 լ. դ.:  
Անէմեան Վարուժան, Քոմիտի փողոց (պատ-  
մուածքներ): Իսթանպուլ 1949:  
Ամիրեան Խաչիկ, Երգեր սիրոյ եւ պայքարի:  
Իսթանպուլ 1948:  
Անդրէասեան Տիրան, Լաֆօնթէնի առակներ:  
Իսթանպուլ 1949:  
Առաջնորդարան կաթ. Հայոց. Օրացոյց:  
Աթէնք 1951:  
Ալան Տիգրան, Մազնեսականութեան դաղա-  
նիքները: Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստե-  
փանեան, 1935, 80, էջ 27: Գինն՝ 5 Ե. դ.:  
Գառնիկ Թ., Հայ մտքին Թափօրը: (Յիշա-  
տակարան եւ փառարանութիւն հայ  
մտքին): Փարիզ 1949:  
Գասարեան Սարգիս Յ., Քրիստոսի ունա-  
նացումը: Պէյրութ 1950, 80, էջ 284:  
Գինն՝ 350 լ. դ.:  
Գասպարեան Մարտիրոս, Ալրոմ 1915—1918:  
Հայ Նահատակներու որպէս սպացոյց  
Աշխարհին ապրող ազգականներու:  
Շթութկարտ 1948:  
Գավուգեան Յովհ. Յ., Յոյս հառաչող մարդ-  
կութեան: Գահիրէ, New Star Press,  
1950, 80, էջ ԻԴ + 171:  
Գարամանեան Դաւիթ, Հայրենի տեսիլքներ:  
Պուէնոս Այրէս 1946:  
Գուլուսեան Լուսֆիլ, Հայ Համանքոյին  
Անցուղարձեր, 1927—1950: Ընդհանուր  
Ժողովոյ նկատմամբ: Իսթանպուլ, տպ.  
Այսրընլըք, 80, էջ 160: Գինն՝ 200 դր.:  
Գուլուսեան Յակոբ, Օրերուս երգը: Նիւ-  
հօրք 1949:  
Երկանեան Արամ, Մեռերոց: Լոսանձէլոս  
1949:  
Թաշեան Բ., Հայկարան է. եւ Ը. տարի:  
Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1950, 80,  
էջ 399: Գինն՝ 50 Ե. դ.:  
Թեւեան Բ., Երջանիկ տարեգիրք: Իսթան-  
պուլ, Dogu Basimevi 1947—1950, 80 մեծ,  
Իսթանպուլ, Varol Matbaasi, 1951, 80  
մեծ:  
Թէրայլ, Բոնուս տիւ — Ռոքանպուլ, Ա., Բ.,  
Գ. հոր.: Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստե-  
փանեան, 1936, 80, էջ 210 + 210 + 217:  
Գինն՝ 20 Ե. դ.: [Մատենաշար «Արաքս»,  
Թ. 17:]  
Թէօլէօլեան Մինաս, Քերականութիւն արդի  
Հայերէնի: Ա. Գիրք նախակրթարանի,  
Գ. եւ Դ. դասարաններու: — Բ. Գիրք նա-

խակրթարանի, Ե. եւ Զ. դասարաններու:  
Հալէպ, տպ. Նայիրի, 1950, 80:  
Թուէյն Մարք, Մէկ միլիոն ոսկինոց պանք-  
նօթը: Թարգմ. Ն. Փապուճեան: Աղե-  
քսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1932,  
80, էջ 38:  
Թովալեան Բիւզանդ, Համայնական սէր:  
Փարիզ 1950, 40, էջ 40:  
Ժամկոչեան Հայկ, Մեր Արժէքները:  
Թիլիսոնցին եւ իր Բրոնիկները: Գահիրէ  
1949:  
Ժողովածու գրականութեան եւ արուեստի:  
[Մատենաշար «Շարժում», Թիւ 1—2:]  
Պէյրութ 1950, 80, Թիւ 1, էջ 104: Գինն՝  
1 լիւր. ոսկի: — Թիւ 2, էջ 106: Գինն՝  
1 լիւր. ոսկի:  
Ժողովրդային նոր երգերու ժողովածոյ: Գա-  
հիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 160, էջ 45:  
Գինն՝ 5 դ. Ե.: [Հրատարակիչ՝ Յ. Մէքէ-  
րեան:]  
— Հրատ. Յ. Մէքէրեան: Գահիրէ, տպ.  
Սահակ-Մեսրոպ [տարի չիբ], 160, էջ 48:  
Գինն՝ 5 Ե. դ.:  
— Հրատ. Եգիպտահայ Պիոներական միու-  
թեան: Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ  
[տարի չիբ], 160, էջ 48: Գինն՝ 7 Ե. դ.:  
Լէա Արդէն, Կնոջ կոչը աշխարհի բոլոր կա-  
նանց: [Թրգմ. Գուրգէն Եանիկեան, Լոս  
Անձէլէս:]  
Լէքրիտըր Գ. Ու., Անոնց որ կու լան: Պա-  
րիս, տպ. Artistique 1929, 80, էջ 34:  
Գինն 3 Ե. դ.:  
Լիակատար ցուցակ գիրքերու սրբոց Յակո-  
բեանց տպարանին, 1833—1927: Երուսա-  
ղէմ 1927:  
Կառվարեց Շահան, Կեանքի քառուղիին  
վրայ: Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ,  
1948, 80, էջ 192: Գինն՝ 50 Ե. դ.:  
— Չայնե՛ր, ձայնե՛ր...: Գահիրէ, տպ.  
Սահակ-Մեսրոպ, 1951, 80, էջ 138: Գինն՝  
50 Ե. դ.:  
Կարթօն Ծ. Ռիշար, Ուրուական, դրուակ մը  
1863ի բօյնիական լեղափոխութենէն:  
Թարգմ. Շաւարշ Ա. Ստեփանեան: Աղե-  
քսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1932,  
80, էջ 255: [Մատենաշար «Արաքս»,  
Թ. 7:]  
Կասարիկեան Պողոս, Մարած ճրագներ (Հա-  
նու գիւղին եղեոնը): Նիւ Եորք, տպ.  
Կոչնակ, 1950, 80, էջ 136: Գինն՝ 1.50  
տոլար:  
Կէզիտեան Ծ. Վ. եւ Ազատեան Թորոս, Հայ  
Պօսնակ: Տարեգիրք 1941: Իսթանպուլ  
1941:  
Կէօպէլեան Երուանդ, Երանի՛ թէ...: Իս-  
թանպուլ 1948: